ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2025 թվականի N 347-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1449-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 12-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱԳ ԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1449-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) ցանկը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-4-րդ կետերով և լրացնել նոր՝ «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակը՝ 1-2-րդ կետերով՝

«

2.	8705100091	XCMG QY25K5D	Դիզելային շարժիչով ամբարձիչ՝ 25 տ բեռնամբարձությամբ	հատ	1	Չինաստան	Չինաստան	51 200 000	
3.	8704239209	SINOTRUK HOWO 6x4 Crane Truck ZZ1257N4647B1, Crane: XCMG brand, GSQZ200.4	Կողավոր բեռնատար դիզելային շարժիչով ավտոմեքենա-մանիպուլյատոր՝ 20 տ-ից ավելի տրանսպորտային միջոցի լրիվ զանգվածով, կոունկի առավելագույն բարձրացնող հզորություն՝ 10 տ	հատ	1	Չինաստան	Չինաստան	34 040 000	
4.	8427209000	XCMG XCF35KT	Անվավոր ինքնագնաց բեռնիչ՝ մինչև 4.5 մ վերելքի բարձրությամբ և մինչև 3.5 տ բարձրացնող հզորությամբ դիզելային շարժիչով, եղանային բեռնիչով	հատ	2	Չինաստան	Չինաստան	15 200 000	

».

«

ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ									
1.	7213911000	Ամրալար	Սև մետաղալար՝ գլոցուկ, 6.5-10 մմ տրամագծով կլոր հատմամբ, բետոնի ամրանավորման համար օգտագործվող, ոչ ցինկապատ	կգ	1 400 000	Իրանի Իսլամական Հանրապետություն	Իրանի Իսլամական Հանրապետություն	280 000 000	
2.	7213100000	Ատամնավոր ամրալար	Ելուստավոր սև մետաղալար (ելուստավոր գլոցուկ), 8-10 մմ տրամագծով կլոր հատմամբ, ոչ ցինկապատ	կգ	600 000	Իրանի Իսլամական Հանրապետություն	Իրանի Իսլամական Հանրապետություն	114 000 000	

».

2) ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «25 000 000» թիվը փոխարինել «519 440 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ